ՀՀ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ, ԵՎ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՍՊԱՍՎՈՂ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2021_1_53

Հիմնաբառեր. *զբոսաշրջիկ, մարքեթինգ, համավարակ, տեղեկատվական-հոգեբանական պատերազմ, միտում*

Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ «Կառավարում» մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է, 2019 թ.-ից՝ կառավարման ամբիոնի ասիստենտ: 100-ից ավելի գիտական հրապարակումների, այդ թվում՝ երեք մենագրության հեղինակ է և երեք ուսումնական ձեռնարկի համահեղինակ:

ORCID - https://orcid.org/0000-0002-4131-6322

Web of Science ResearcherID: AAH-5677-2021
Scopus Author ID: 56690085600

COVID-19 համավարակն ահռելի վնաս է հասցրել համաշխարհային զբոսաշրջության ոլորտին: 2020 թ. միջազգային զբոսաշրջիկների թիվն աշխարհում կազմել է 381 միլիոն մարդ՝ նվազելով 74%-ով: Համավարակի պայմաններում, նույն ժամանակահատվածում ՀՀ ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 375216՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 80%-ով: Ընդ որում, առաջին երեք եռամսյակում զբոսաշրջային ծառայությունների արտահանման ծավալը մեր հանրապետությունում կազմել է 248,1 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ պակաս է 903 մլն ԱՄՆ դոլարով:

Ներկայում չափազանց կարևորվում է ՀՀ ներկայացումն արտերկրում՝ որպես անվտանգ ու գրավիչ դեստինացիա, ինչի համար անհրաժեշտ է վարել հարձակողական (ագրեսիվ) մարքեթինգային քաղաքականություն: Հոդվածագիրն այս առումով առաջարկում է իրականացնել «տեղեկատվական-հոգեբանական պատերազմ» սոցիալական ցանցերում՝ տարածելով ՀՀ զբոսաշրջային վայրերի և առաջարկների մասին նյութեր, որոնք ոչ միայն տեղեկացնելու, այլև միջազգային հանրության շրջանում որոշակի տրամադրություն, գիտելիք և համապատասխան վարքագիծ ձևավորելու միտում կունենան՝ շահադրդելով այցելելու Հայաստան:

Ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի տվյալների համաձայն՝ 2019 թ. զբոսաշրջության համախառն ներդրու-

մը համաշխարհային ՀՆԱ-ում կազմել է 8.9 տրիլիոն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ 10.3%-ը՝ ապահովելով 330 միլիոն աշխատատեղ (յուրաքանչյուր 10 աշխատատեղից 1-ը), իսկ այցելուների ծախսերը կազմել են 1.7 տրիլիոն ԱՄՆ դոլար (ընդհանուր արտահանման 6.8%-ը, ծառայությունների արտահանման 28.3%-ը)[1]: Նշված ցուցանիշները վկայում են, որ զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության բարձր արդյունավետությամբ զարգացող ճյուղերից էր, քանի դեռ 2020 թ. ամբողջ աշխարհով տարածվող COVID-19 համավարակը չէր խաթարել նրա գործունեությունը:

Համավարակն ահռելի վնաս հասցրեց զբոսաշրջության ոլորտին: 2019 թ. միջազգային զբոսաշրջիկների թիվը մոտ 1.5 մլրդ էր[2], որը, ըստ կանխատեսումների, 2030 թ. պետք է հասներ 1,8 միլիարդի[3]: Դեռևս 2020 թ. մարտի սկզբին, երբ վարակը նոր էր սկսել տարածվել, ՋՀԿ-ն ազդարարեց համաշխարհային զբոսաշրջիկների թվի 1-3%-ով[4] նվազման մասին: Ավելի ուշ կանխատեսումները թարմացվեցին, և նշվեց, որ միջազգային զբոսաշրջային այցելությունները 2020 թ. կկրճատվեն 20-30%-ով[5]: 2020 թ. մայիսի դրությամբ, հաշվի առնելով փակ սահմանները և ճանապարհորդելու սահմանափակումները, ՋՀԿ-ն կանխատեսեց այցելությունների 58-78%-ով անկում՝ տարվա կտրվածքով[6]:

Արդյունքում, 2020 թ միջազգային զբոսաշրջիկների թիվը կազմել է 381 միլիոն մարդ՝ նվազելով 74%-ով: Հարկ է նշել, որ 2009 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակ զբոսաշրջային այցելությունները կրճատվել են ընդամենը 4%-ով: Ըստ ՋՀԿ-ի՝ 2020 թ. միջազգային ճանապարհորդությունների նվազումը հանգեցրել է արտահանման եկամուտների՝ 1.3 տրիլիոն ԱՄՆ դոլարի կորստով, ինչն ավելի քան 11 անգամ գերազանցում է 2009 թ.-ի համաշխարհային տնտեսական ճգնաժամի ընթացքում արձանագրված վնասը: Ճգնաժամը ռիսկային է դարձրել զբոսաշրջության ոլորտի 100-120 միլիոն ուղղակի աշխատատեղերի գոյությունը, որոնց մեծ մասը՝ փոքր և միջին ձեռնարկություններում: Համավարակի զարգացող բնույթի պատճառով շատ երկրներ այժմ վերականգնում են ճանապարհորդության ավելի խիստ սահմանափակումները: Դրանք ներառում են պարտադիր թեստավորում, կարանտին, իսկ որոշ դեպքերում՝ սահմանների ամբողջական փակում, որոնք խոչընդոտում են միջազգային ճանապարհորդության վերսկսումը: Միաժամանակ, ակնկալվում է, որ COVID-19-ի պատվաստանյութի աստիճանական տարածումը կօգնի վերականգնել զբոսաշրջիկի վստահությունը, կնպաստի ճամփորդական սահմանափակումների թուլացմանը, ինչպես նաև ճանապարհորդությունների հետզհետե կարգավորմանն առաջիկայում[7]:

ՋՀԿ-ն նաև դիտարկում է մի շարք սցենարներ 2021-2024 թթ.-ի համար՝ հաշվի առնելով որոշ գործոններ. ճանապարհորդելու սահմանափակումների աստիճանական վերացում, զբոսաշրջիկների վստահության մակարդակի բարելավման տեմպ և տնտեսական պայմաններ: Ըստ այդմ՝ միջազգային զբոսաշրջային այցելությունների 2019 թ. ցուցանիշի վերականգնման համար կպահանջվի 2.5-4 տարի: Առաջին սցենարի համաձայն՝ 2019 թ. ցուցանիշի վերականգնումը տեղի կունենա 2.5 տարի հետո՝ 2023 թ. կեսերին, երկրորդ սցենարի համաձայն՝ 3 տարի հետո՝ 2023 թ. վերջին, իսկ ըստ երրորդ սցենարի, 4 տարի հետո՝ 2024 թ. վերջին: Կազմակերպության հա-

[1] Economics impact reports, https://wttc.org/Research/Economic-Impact
[2] UNWTO World Tourism Barometer and Statistical Annex, January 2020, 18(1), p. 1, https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/wtobarometereng.2020.18.1.1
[3] Tourism Towards 2030 / Global Overview, Advance edition presented at UNWTO 19th General Assembly – 10 October 2011, p. 15, https://www.globalwellnesssummit.com/wp-content/uploads/Industry-Research/Global/2011_UNWTO_Tourism_Towards_2030.pdf
[4] Impact assessment of the COVID-19 outbreak on international tourism, UNWTO, 2020: https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-03/UNWTO-Impact-Assessment-COVID19.pdf
[5] International tourist arrivals could fall by 20-30% IN 2020, https://www.unwto.org/news/international-tourism-arrivals-could-fall-in-2020
[6] UNWTO World Tourism Barometer May 2020 Special focus on the Impact of COVID-19 (Summary), pp. 1-24, https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-05/Barometer%20-%20May%202020%20-%20Short.pdf
[7] 2020: Worst year in tourism history with 1 billion fewer international arrivals, https://www.unwto.org/news/2020-worst-year-in-tourism-history-with-1-billion-fewer-international-arrivals

մոգմամբ՝ ոլորտի վերականգնումը կսկսվի 2021 թ.-ին, սակայն 2021 և 2022 թթ.-ին զբոսաշրջային այցելությունների ցուցանիշը դեռևս ցածր կլինի 2019 թ.-ին արձանագրված մակարդակից[8]:

COVID-19-ի հետևանքով փոխվեցին նաև զբոսաշրջային ճանապարհորդությունների միտումները, և քանի որ 2021 թ.-ին համավարակը դեռևս չի նահանջել, ուստի, հաշվի առնելով վերջին զարգացումները, կարելի է կանխատեսել զբոսաշրջային ճանապարհորդությունների միտումները և զբոսաշրջիկների բնութագրերը.

- առավել զգուշավոր զբոսաշրջիկներ,
- միջազգային զբոսաշրջային ճանապարհորդությունների կրճատում և դրանց իրականացում առավելապես խիստ անհրաժեշտության դեպքում,
- զբոսաշրջային ապահովության և անվտանգության գործոնների կարևորության մեծացում և այցեր առավել անվտանգ երկրներ, որտեղ վարակվելու ռիսկը փոքր է,
- այցելություններ ոչ զանգվածային զբոսաշրջային վայրեր,
- ներքին զբոսաշրջության աճ,
- զբոսաշրջիկների՝ բժշկական ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճ,
- զբոսաշրջային այցեր դեպի առավել զարգացած առողջապահական համակարգ ունեցող երկրներ,
- գործարար զբոսաշրջություն և այլն:

Այժմ անդրադառնանք ՀՀ զբոսաշրջության ոլորտի կորուստներին:

Ըստ ՀՀ ՁԿ տվյալների՝ 2019 թ. ՀՀ է ժամանել 1894377 զբոսաշրջիկ, իսկ ՀՀ-ից մեկնել է 1867888-ը: 2018 թ. համեմատ ժամանողների թիվն աճել է 14.7%-ով[9]: 2020 թ. համավարակի պայմաններում ՀՀ ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 375216՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 80%-ով[10]:

Ստորև դիտարկվել են 2019-2020 թթ. զբոսաշրջային այցելություններն ըստ եռամսյակների (աղյուսակ 1): 2020 թ. առաջին եռամսյակում ներգնա զբոսաշրջային այցելությունները կազմել են 311264՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 14.6%-ով, ապրիլ-հունիսին և հուլիս-օգոստոսին ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 16-ի № 298-Ն որոշմամբ պայմանավորված, ՀՀ ներգնա զբոսաշրջային այցելություններ չեն արձանագրվել, սեպտեմբերին գրանցվել է 16471, իսկ չորրորդ եռամսյակում՝ 47481 զբոսաշրջային այցելություն: Հետևաբար՝ 2020 թ.-ին 2019 թ.-ի համեմատ գրանցվել է 1519161-ով պակաս այցելություն:

2020 թ. ՀՀ ժամանած 375216 ներգնա

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թիվը 2019-2020 թթ.՝ ըստ եռամսյակների, մարդ[11]

Թվաքանակ/տարի	2019 եռ. 1	2019 եռ. 2	2019 եռ. 3	2019 եռ. 4	2019	2020 եռ. 1	2020 եռ. 2	2020 եռ. 3	2020 եռ. 4	2020
Ժամանել են ուղևորներ, որոնք, ըստ ՁՀԿ մեթոդաբանության, համարվում են զբոսաշրջիկներ	364,489	405,566	689,097	435,225	1,894,377	311,264	-	16,471	47,481	375,216
Մեկնել են ուղևորներ, որոնք, ըստ ՁՀԿ մեթոդաբանության, համարվում են զբոսաշրջիկներ	317,891	366,917	627,474	555,606	1,867,888	275,716	-	10,511	59,866	346,093

[8] World Tourism Barometer, Volume 18, Issue 5, August/September 2020, UNWTO, pp. 1, 5, 21, https://www.e-unwto.org/doi/epdf/10.18111/wtobarometereng.2020.18.1.5

[9] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար դեկտեմբերին, էջ 139, https://www.armstat.am/file/article/sv_12_19a_421.pdf

[10] ՀՀ-սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 143, https://www.armstat.am/file/article/sv_12_20a_421.pdf

[11] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի մասին եռամսյակային հրապարակումներ, 2019-2021 թթ., աղբյուրը՝ https://www.armstat.am

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՀՀ վճարային հաշվեկշռից զբոսաշրջային ծառայությունների ծավալը 2019-2020 թթ., մլն ԱՄՆ դոլար[12]

Ցուցանիշ	2019 եռ. 1	2019 եռ. 2	2019 եռ. 3	2019 եռ. 4	2019	2020 եռ. 1	2020 եռ. 2	2020 եռ. 3	2020 եռ. 4
Ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայություններ	32.4	47.0	64.1	-42.2	**101.3**	20.8	-2.6	0.5	-
կրեդիտ	268.7	317.8	564.6	383.8	**1,534.9**	227.3	4.8	16.0	-
դեբետ	236.3	270.9	500.4	426.0	**1,433.6**	206.6	7.4	15.6	-

զբոսաշրջիկներից 97550-ը հանգրվանել է հյուրանոցային տնտեսության օբյեկտներում, որոնց 50,3%-ի նպատակը եղել է հանգիստն ու ժամանցը: Մնացած 277666 զբոսաշրջիկները հանգրվանել են բարեկամի կամ հարազատի տանը կամ վարձով բնակարաններում[13]:

2019 թ. վճարային հաշվեկշռի ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայությունների (զբոսաշրջային ծառայությունների) արտահանման ծավալը կազմել է 1534.9 մլն, իսկ ներմուծմանը՝ 1433.6 մլն ԱՄՆ դոլար[14]: 2020 թ. առաջին երեք եռամսյակում զբոսաշրջային ծառայությունների արտահանման ծավալը կազմել է 248,1 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա առաջին երեք եռամսյակի համեմատ պակաս է 903 մլն ԱՄՆ դոլարով: Դեռևս առկա չեն 2020 թ. չորրորդ եռամսյակի տվյալները, սակայն, հաշվի առնելով այդ ժամանակահատվածում ժամանած զբոսաշրջիկների փոքր թիվը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, կարելի է ասել, որ էական նվազում կլինի (աղյուսակ 2):

Հարկ է նշել, որ վերջին տարիներին աճում էր նաև ՀՀ ներքին զբոսաշրջիկների թիվը: 2019 թ. դա կազմել է 1544600, 2020 թ.՝ 1045756 մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 32 %-ով[15]:

ԱՂՅՈՒՍԱԿ 3

ՀՀ ներքին զբոսաշրջիկների թիվը 2017-2020 թթ.[16]

Թվաքանակ/տարի	2017	2018	2019	2020
Ընդամենը զբոսաշրջիկ*, որից ըստ նպատակի	1086707	1092322	1544600	**1045756**
Գործնական	252787	207761	280542	**150649**
Հանգիստ և ժամանց	742188	781668	1112305	**765100**
Բուժում	43558	58339	52006	**53500**
Այլ	48174	44554	99747	**76507**

**Տվյալներն արտացոլում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին:*

[12] ՀՀ վճարային հաշվեկշիռ, Արտաքին հատվածի վիճակագրություն, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx
[13] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվարին, էջ 113, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_421.pdf
[14] ՀՀ վճարային հաշվեկշիռը 2019 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 8, https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/Press-release%202019Q4.pdf
[15] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հոկտեմբերին, էջ 122, https://www.armstat.am/file/article/sv_10_20a_422.pdf
[16] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-հոկտեմբերին, էջ 126, https://www.¬armstat.am-/file/article/sv_10_18a_432.pdf, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվարին, էջ 97, https://www.armstat.am/¬file/article/sv_-01_18a_422.pdf, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվարին, էջ 106, https://www.armstat.am/file/article/sv_01_19a_422.pdf, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվարին, էջ 115, https://www.armstat.am/file/article/sv_01_20a_422.pdf, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հոկտեմբերին, էջ 122, https://www.armstat.am/file/article/sv_10_20a_422.pdf, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվարին, էջ 115, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_422.pdf

Ինչպես տեսնում ենք, 2020 թ. ՀՀ-ում նվազել է թե՛ ներգնա, թե՛ ներքին զբոսաշրջիկների թիվը՝ պայմանավորված համավարակի ընթացքում որոշ ամիսներին կիրառվող ներքին և միջազգային տեղաշարժի սահմանափակումներով:

Ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի հրապարակումները վկայում են, որ ՀՀ-ում զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում 2019 թ. կազմել է 774.67 մլրդ դրամ կամ 1.6 մլրդ ԱՄՆ դոլար (ՀՆԱ 11.8%-ը)՝ ապահովելով ընդհանուր զբաղվածության 12.5%-ը կամ 124600 աշխատատեղ[17]: Թեպետ դեռ չկա 2020 թ.վիճակագրական տեղեկատվությունը՝ կապված այս ցուցանիշների փոփոխության հետ, այդուհանդերձ, զբոսաշրջիկների թվի նվազման տեմպերից և վճարային հաշվեկշռի տվյալներից ակնհայտ է դառնում, որ ոլորտն էականորեն տուժել է: Ըստ վիճակագրական տվյալների՝ կացության և հանրային սննդի կազմակերպման ծառայությունների ծավալը զգալի չափով նվազել է (աղյուսակ 4), ընդ որում, դա առավելապես ակնառու է կացության կազմակերպման ծառայությունների առումով՝ շուրջ 70%: Ինչպես հայտնի է, ՀՀ կառավարությունն իրականացրել է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված որոշ հակաճգնաժամային միջոցառումներ՝ ընդգրկելով նաև զբոսաշրջության ոլորտի կազմակերպությունները, սակայն քանի դեռ չեն ամփոփվել համապատասխան վիճակագրական տվյալները, պարզ չէ՝ արդյո՞ք դրանք փակվել են, թե կրճատվել են աշխատատեղերը:

2020 թ. հոկտեմբերի 31-ին ՀՀ կառավարության N1756-Ն որոշմամբ փոփոխություն կատարվեց ՀՀ մուտք գործելիս ինքնամեկուսացման և թեստ հանձնելու ընթացակարգում, և սահմանվեց, որ ՀՀ տարածք մուտք գործելիս կարելի է ներկայացնել կորոնավիրուսային հիվանդության ախտորոշման հետազոտության բացասական արդյունքը հավաստող՝ առավելագույնը 72 ժամ վաղեմության արտոնագիր, իսկ դրա չներկայացման դեպքում անձը ենթակա է ՊՇՌ հետազոտության համար նմուշառման օդանավակայանում կամ ցամաքային սահմանի անցման կետում տեղակայված նմուշառման կետերում և պարտադիր ինքնամեկուսացման՝ մինչև ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքի ստացումը[18]:

ՀՀ կառավարության 2021 թ. հունվարի 11-ի 1-Ն որոշման համաձայն՝ ՀՀ-ում սահմանված կարանտինի ժամկետը երկարաձգվեց մինչև նույն թվականի հուլիսի 11-ը, ինչպես նաև հանվեց ՀՀ քաղաքացի

ԱՂՅՈՒՍԱԿ 4

Կացության և հանրային սննդի կազմակերպման ծառայությունների ծավալը 2019-2020 թթ.[19]

	2020 թ. հունվար-դեկտեմբեր, ընդամենը՝ մլն դրամ, ընթացիկ գներով	*2019 թ. հունվար-դեկտեմբեր, ընդամենը՝ մլն դրամ, ընթացիկ գներով*	*2020 թ. հունվար-դեկտեմբերը 2019 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %*
Կացության և հանրային սննդի կազմակերպում, *այդ թվում՝*	**108245.1**	193913.7	55.0
Կացության կազմակերպում	**13786.0**	41721.0	31.0
Հանրային սննդի կազմակերպում	**94459.1**	152192.7	61.6

[17] Armenia 2020, Annual research: Key highlights, p. 1, https://wttc.org/Research/Economic-Impact

[18] ՀՀ կառավարության 2020 թ. հոկտեմբերի 31-ի 1756 – Ն որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թ. սեպտեմբերի 11-ի 1514-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին, https://www.e-gov.am/gov-decrees/item/34990/

[19] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 56, https://www.armstat.am/file/article/sv_12_20a_126.pdf, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 54, https://www.armstat.am/file/article/sv_12_19a_126.pdf

չհանդիսացող անձանց համար ՀՀ ցամաքային ճանապարհով մուտք գործելու արգելքը[20]: Փաստորեն, այժմ ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձինք կարող են այցելել մեր հանրապետություն ինչպես օդային, այնպես էլ ցամաքային ճանապարհով, եթե ունեն COVID-19 ախտորոշման հետազոտության բացասական արդյունքը հավաստող՝ առավելագույնը 72 ժամ վաղեմության արտոնագիր:

Իհարկե, համավարակն ազդել և ազդում է ամբողջ աշխարհում զբոսաշրջության ոլորտի վրա, և այսօր մի շարք երկրներ կրկին խիստ սահմանափակումներ են իրականացնում, թռիչքները ոչ ամբողջությամբ են վերականգնված, ուստի ակնհայտ է, որ առաջիկայում զբոսաշրջությունը դեռևս պետք է կազմակերպվի համավարակի սահմանափակումների պայմաններում, մինչև որ հնարավոր կլինի վարակի դեմ պատ-վաստվելուց հետո վերադառնալ բնականոն կյանքին:

Բացի համավարակից, ՀՀ զբոսաշրջության վրա բացասական ազդեցություն կարող է ունենալ նաև Արցախյան երկրորդ պատերազմը: Այս առումով, չափազանց կարևորվում է արտերկրում ՀՀ ներկայացումը որպես անվտանգ ու գրավիչ զբոսաշրջային դեստինացիա: Ուստի ,անհրաժեշտ է վարել հարձակողական մարքեթինգային քաղաքականություն՝ աշխարհի աչքում բացահայտելով մեր զբոսաշրջային ռեսուրսները (պատմամշակութային հարուստ ժառանգություն, առաջին քրիստոնյա երկիր, համեղ ազգային խոհանոց, գինի և կոնյակ, գեղատեսիլ բնություն, գյուղական ու առողջարանային հանգստի նպաստավոր պայմաններ և այլն):

Թե՛ ներքին, թե՛ միջազգային զբոսաշրջության խթանման ժամանակ հարկ է հաշվի առնել 2021 թ. միտումները, որոնք առավելապես վերաբերում են խիստ անհրաժեշտությունից բխող, օրինակ՝ գործնական կամ բուժման նպատակով այցերին, զբոսաշրջիկների զգուշավորության, զբոսաշրջային ապահովության և անվտանգության մակարդակի բարձրացման հանգամանքներին, վարակվելու առումով՝ առավել անվտանգ երկրներին կամ վայրերին նախապատվություն տալուն, ոչ զանգվածային զբոսաշրջային վայրերի նկատմամբ պահանջարկի մեծացմանը և այլն: Ի դեպ, ՀՀ-ն համարվում է ոչ զանգվածային զբոսաշրջային վայր, և համավարակի պայմաններում այդ հանգամանքը կարելի է օգտագործել որպես առավելություն՝ նման կերպ ներկայացնելով երկիրը սոցիալական ցանցերում իրականացվող գովազդներում:

Նախորդ վերլուծականներից մեկում արդեն իսկ հանդես ենք եկել մի շարք առաջարկություններով՝ կապված համավարակի պայմաններում ներքին և ներգնա զբոսաշրջության խթանման հետ, մասնավորապես՝ նոր երթուղիների մշակում, հարձակողական մարքեթինգի, բրենդինգի և այլ միջոցառումների իրականացում, զբոսաշրջային պաշտոնական կայքէջում տեղեկատվության ընդլայնում և այլն[21]: Բանն այն է, որ ներկայում լավ մշակված բրենդի (ապրանքանիշի) առկայությունը մեծ նշանակություն ունի և կարող է ՀՀ-ն դիրքավորել որպես գրավիչ զբոսաշրջային դեստինացիա: Ի լրումն նախկինում արված առաջարկությունների՝ կարելի է հավելել հետևյալը. մեր օրերում, ինչպես գիտենք, զբոսաշրջիկների համար հիմնական տեղեկատվական հարթակը սոցիալական մեդիան է, ուստի Ֆեյսբուք, Թվիթեր, Վկոնտակտե, Ինստագրամ և այլ հարթակներում, իրականացնելով «տեղեկատվական-հոգեբանական պատերազմ», տարածելով ՀՀ զբոսաշրջային վայրերի և առաջարկների մասին նյութեր, հնարավոր է ոչ միայն համապատասխան տեղեկություններ տարածել, այլև միջազգային հանրության շրջանում որոշակի տրամադրություն, գիտելիք և համապատասխան վարքագիծ ձևավորել՝ շահադրդելով այցելելու ՀՀ: Ընդ որում, նման արշավների կազմակերպումն հնա-

[20] ՀՀ կառավարության 2021 թ. հունվարի 11-ի 1 – Ն որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թ. սեպտեմբերի 11-ի N 1514-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին, https://www.e-gov.am/gov-decrees/item/35435/

[21] Թովմասյան Գ., Ինչպես վերականգնել զբոսաշրջությունը COVID-19-ի պայմաններում, «Ամբերդ» տեղեկագիր, 2020 - 4(5), էջ 57-66, https://asue.am/upload/files/amberd/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%20 2020.4.pdf

ռավոր կլինի ոչ միայն զբոսաշրջային ընկերությունների և ՀՀ պաշտոնական զբոսաշրջային էջի, այլև սոցիալական ցանցերից օգտվող բոլոր քաղաքացիների միջոցով: «Այցելի՛ր Հայաստան», «Այցելի՛ր աշխարհի առաջին քրիստոնյա երկիրը», «Այցելի՛ր աշխարհի ամենահին երկրներից մեկը» և այլ կոչերով ու հեշթեգներով, ՀՀ տարբեր տեսարժան վայրերի լուսանկարներով հագեցած տեղեկությունների տարածումը, անշուշտ, միջազգայնորեն ավելի ճանաչելի կդարձնի մեր երկիրը: Սա կարող է նպաստել նաև ՀՀ՝ որպես անվտանգ զբոսաշրջային դեստինացիայի դիրքավորմանը: Այս արշավի նախաձեռնողն ու կազմակերպիչը պետք է լինի Զբոսաշրջության կոմիտեն, որը համակարգված կերպով կարող է մշակել համապատասխան նյութեր, որոնք ակտիվորեն կտարածվեն օգտատերերի կողմից: Այսօր տեղեկատվական-հոգեբանական պատերազմների մեթոդը հաճախ է կիրառվում սոցիալական կայքերում տարբեր նպատակներով՝ հատկապես քաղաքական: Նույնը կարելի է անել նաև ՀՀ զբոսաշրջության խթանման առումով:

Ներկա պայմաններում, հաշվի առնելով համավարակի և պատերազմի հետևանքով ստեղծված տնտեսական ճգնաժամային իրավիճակը, անչափ կարևորվում է տնտեսության աշխուժացմանն ուղղված յուրաքանչյուր միջոցառման իրականացում, իսկ զբոսաշրջության վերականգնումն էական նշանակություն ունի ՀՀ տնտեսության համար՝ հաշվի առնելով ոլորտի ներդրումը ՀՆԱ-ում և զբաղվածության մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թովմասյան Գ., Ինչպե՞ս վերականգնել զբոսաշրջությունը COVID-19-ի պայմաններում, «Ամբերդ» տեղեկագիր, 2020, 4(5), էջ 57-66, https://asue.am/upload/files/amberd/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%202020.4.pdf
2. ՀՀ կառավարության 2020 թ. հոկտեմբերի 31-ի 1756 – Ն որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թ. սեպտեմբերի 11-ի N1514-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին, https://www.e-gov.am/gov-decrees/item/34990/
3. ՀՀ կառավարության 2021 թ. հունվարի 11-ի 1 – Ն որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թ. սեպտեմբերի 11-ի N1514-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին, https://www.e-gov.am/gov-decrees/item/35435/
4. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-հոկտեմբերին, էջ 126, https://www.armstat.am/file/article/sv_10_18a_432.pdf
5. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվարին, էջ 97, https://www.armstat.am/file/article/sv_01_18a_422.pdf
6. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 139, 54, https://www.armstat.am/file/article/sv_12_19a_421.pdf, https://www.armstat.am/file/article/sv_12_19a_126.pdf
7. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվարին, էջ 106, https://www.armstat.am/file/article/sv_01_19a_422.pdf
8. ՀՀ-սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 143, 56, https://www.armstat.am/file/article/sv_12_20a_421.pdf, https://www.armstat.am/file/article/sv_12_20a_126.pdf
9. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվարին, էջ 115, https://www.armstat.am/file/article/sv_01_20a_422.pdf
10. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հոկտեմբերին, էջ 122, https://www.armstat.am/file/article/sv_10_20a_422.pdf
11. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվարին, էջ 113, 115, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_422.pdf, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_421.pdf
12. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի մասին եռամսյակային հրապարակումներ, 2019-2021 թթ., https://www.armstat.am
13. ՀՀ վճարային հաշվեկշիռը 2019 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 8, https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/Press-release%202019Q4.pdf
14. ՀՀ վճարային հաշվեկշիռ, Արտաքին հատվածի վիճակագրություն, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx
15. Armenia 2020, Annual research: Key highlights, p. 1,

https://wttc.org/Research/Economic-Impact
16. Economics impact reports, https://wttc.org/Research/Economic-Impact
17. Impact assessment of the COVID-19 outbreak on international tourism, UNWTO, 2020: https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-03/UNWTO-Impact-Assessment-COVID19.pdf
18. International tourist arrivals could fall by 20-30% IN 2020, https://www.unwto.org/news/international-tourism-arrivals-could-fall-in-2020
19. Tourism Towards 2030 / Global Overview, Advance edition presented at UNWTO 19th General Assembly – 10 October 2011, p. 15, https://www.globalwellnesssummit.com/wp-content/uploads/Industry-Research/Global/2011_UNWTO_Tourism_Towards_2030.pdf
20. UNWTO World Tourism Barometer and Statistical Annex, January 2020, 18(1), p. 1, https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/wtobarometereng.2020.18.1.1
21. UNWTO World Tourism Barometer May 2020 Special focus on the Impact of COVID-19 (Summary), pp. 1-24, https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-05/Barometer%20-%20May%202020%20-%20Short.pdf
22. 2020: Worst year in tourism history with 1 billion fewer international arrivals, https://www.unwto.org/news/2020-worst-year-in-tourism-history-with-1-billion-fewer-international-arrivals
23. World Tourism Barometer, Volume 18, Issue 5, August/September 2020, UNWTO, pp. 1, 5, 21, https://www.e-unwto.org/doi/epdf/10.18111/wtobarometereng.2020.18.1.5

Гаяне ТОВМАСЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

ОБЗОР СФЕРЫ ТУРИЗМА В РА И В МИРЕ НА 2020 ГОД И ТЕНДЕНЦИИ НА БУДУЩЕЕ

Пандемия COVID-19 нанесла огромный ущерб индустрии туризма во всем мире. В 2020 году количество международных туристов в мире составило 381 миллион человек, что на 74% меньше, чем в предыдущем году. В 2020 году количество прибывающих в Армению туристов составило 375216 человек, что на 80% меньше, чем в предыдущем году. В 2020 году экспорт туристических услуг в Армению за первые три квартала года составил 248,1 миллиона долларов США, что на 903 миллиона долларов меньше, чем за первые три квартала прошлого года.

В нынешней ситуации очень важно представить Армению за рубежом как безопасное и привлекательное направление, поэтому необходимо проводить агрессивную маркетинговую политику. В статье предлагается вести «информационно-психологическую войну» в социальных сетях, распространять материалы о предложениях армянских туристических мест не только для информирования, но и для создания определенного настроения, знаний и соответствующего поведения в международном сообществе, подталкивая их посетить Армению.

Ключевые слова: *турист, маркетинг, пандемия, информационно-психологическая война, тренд*

Gayane TOVMASYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE, PhD in Economics

MARKETS AND COMPETITION

OVERVIEW OF TOURISM SPHERE IN THE RA AND THE WORLD IN 2020, AND THE TRENDS EXPECTED IN THE FUTURE

The Covid-19 pandemic has caused enormous damage to the tourism industry around the world. In 2020, the number of international tourists in the world amounted to 381 million people, a decrease of 74%. In 2020, the number of incoming tourists to Armenia was 375216, decreasing by 80% as compared to the previous year. In 2020, the exports of tourism services to Armenia in the first three quarters of the year amounted to $ 248.1 million, which is $ 903 million less than in the first three quarters of the last year.

In current situation, it is very important to present Armenia abroad as a safe and attractive destination, so it is necessary to implement an aggressive marketing policy. The paper suggests carrying out an "information-psychological war" on social networks, spreading materials about the offers of Armenian touristic places not only to inform, but also to create a certain mood, knowledge and appropriate behavior among the international community, forcing them to visit Armenia.

Keywords: *ttourist, marketing, pandemic, information-psychological war, trend*